Արդշինբանկ

№ 1921-2770

«25» 02 2026թ.

ԵՐԱՇԽԻՔ N ՐԲԵՀ26/96-01

1. Սույն երաշխիքը, ինչպես նաև սույն երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում են Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/45 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին «ԿԱՐԿՈՄԱՎՏՈ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) մասնակցությունից բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 1,500,000.0 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումար (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում է մինչև 25.08.2026թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ hayk.aghabalyan@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը և երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կորպորատիվ վարկերի կենտրոնացված
ձևակերպումների բաժնի պետ՝ Արմինե Աբգարյան

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԲԸ
«ARDSHINBANK» OJSC
ԳԼԽԱՄԱՍԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HEAD OFFICE
02566492 20024

ՀՀ, 0015, ք. Երևան, Գր. Լուսավորչի փող., 13
(+374 12) 222222 / office@ardshinbank.am / ardshinbank.am